



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
25 հունվարի 2018 թվականի N 19-Ա

ՎԱՐԴԱՆ ԴԱՎԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով՝

Կ ա Ր Գ ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանին 2018թ. հունվարի 26-ից 28-ը ներառյալ գործուղել ք. Երևան՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, ձեռքբերումներ և խնդիրներ» խորագրով գիտագործնական կոնֆերանսին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ներկայացնել գործուղման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Կից՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018թ. հունվարի 24-ի N ԱՊ/ԱՄ-1-4/654-18 գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Վ. ՀԱԿՈՒԲՅԱՆ